

ՅՈՐԵԼԵԱՆ

**ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ 55-ԱՄԵԱԿ
ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՊԱՐԵՏ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԷՅԵԱՆԻ**

Ծնած է Երուսաղէմ, 29 Օգոստոս, 1946-ին, Կիլիկեցի ծնողքէ: Նախնական կրթութիւնը ստացած է Սբ. Թարգմանչաց վարժարանին մէջ: 1959-ին անցած է Ժառանգաւորաց վարժարան, որուն ընթացքը աւարտելէ ետք հետեւած է Ընծայարանի դասընթացքներուն եւ 1965-ի Յուլիս 31-ին ձեռնադրուած է սարկաւագ՝ ձեռամբ Երջանկայիշատակ Տ. Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի:

1966-ի Մայիս 29-ին ձեռնադրուած է կուսակրօն արեղայ ձեռամբ՝ Տ. Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի: Ապա ուսանած է Հրէական համալսարանի հնագիտութեան բաժնին մէջ: Երեք տարի ուսանելէ ետք, ծառայութեան կոչուելով Յորդանան՝ կիսատ ձգած է ուսումը: Յորդանանէն վերադառնալէ ետք ուսանած է Ամերիկեան քոլէճ եւ վկայուած որպէս պսակաւոր:

1968-ին ձեռամբ օրուան Լուսարարապետ՝ Տ. Հայրիկ Արք. Ասլանեանի ստացած է վարդապետական չորս աստիճաններ եւ լանջախաչ կրելու իրաւունք: Ապա Ալեք Մանուկեանի հրաւերով եւ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի օրհնութեամբ մեկնած է Տիթրոյթ՝ ուսանելու Ամերիկեան համալսարանի Քաղաքագիտութեան բաժնին մէջ:

Ամերիկա բնակելու տարիներուն քսանհինգ տարիներ հովուական գործունէութիւն ծաւալած է: 12 տարի եղած է Թեմական խորհուրդի անդամ եւ փոխ-ատենապետ: Վարած է Նիւ Ինկլընտ շրջանի փոխ-առաջնորդի պաշտօնը, ապա փոխադրուած է Գալիֆօրնիա, ուր ապրած է երեք տարի:

1982-ին Ամերիկայի մէջ ստացած է Ծայրագոյն վարդապետութեան աստիճան, ձեռամբ՝ Տ. Թորգոմ Արք. Մանուկեանի:

2000-2006 թթ. եղած է Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի տեսուչ:

2014-ի Ապրիլ 10-էն ցայժմ Ս. Աթոռոյս Կալուածոց տեսուչն է:

Բացի վերը նշուածներէն, յոբելեար Հայր Սուրբը իր քահանայութեան 55 տարիներու ընթացքին վարած է շարք մը կարեւոր պաշտօններ: Եղած է Գաւազանակիր, Ս. Աթոռոյս Աւագ Թարգման, Գանձատան յանձնախումբի անդամ, տեսուչ՝ Սբ. Թարգմանչաց վարժարանի, ուսուցիչ՝ Սբ. Թարգմանչաց վարժարանի եւ Ժառանգաւորաց վարժարանի, Փոխ-ատենապետ՝ Միաբանական Ընդհանուր ժողովի: Տարբեր տարիներուն եղած է Տնօրէն ժողովի անդամ ինչպէս նաեւ Կանոնադրական յանձնախումբի անդամ:

«Սիրոն» յանուն Նորին Ամեն. Ս. Պատրիարք Հօր կը շնորհաւորէ Հոգեշնորհ Յոբելեարի Քահանայական Ձեռնադրութեան 55-ամեակը, եւ կը մաղթէ որ Աստուած օգնական ըլլայ եւ զօրացնէ անոր:

ԽՄԲ.